



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՅՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՐՂԵՐԶԸ ԱՎԵՏՄԱՆ
ՏՈՒՆԻ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ավետման տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքներն ենք հղում մեր մայրերին, քույրերին եւ մայրության բերկրանքին սպասող կանանց:

Չատկական սրբաբար եւ շնորհանորդ այս օրերին տոնախմբում ենք Սուրբ Ավետման պանծալի հիշատակը՝ մեր սուրբ եկեղեցիների խորաններից խնդրելով Աստվածածին Սուրբ Կույսի բարեխոսությունը մեր ողջ ժողովրդի եւ մասնավորապես մայրության ուրախությանը սպասող կանանց համար: Երկու հազար տարի առաջ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մայրը Տիրոջ հրեշտակից խոնարհաբար ընդունեց մարդկության Փրկչին ծնունդ տալու աստվածային պատգամը՝ ասելով. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը»: Սուրբ Կույսի աստվածասիրության, Տիրոջ հանդեպ աներեր հավատքի բարի օրինակն ունենալով՝ պատմության ընթացքում մեր մայրերն ու քույրերը չեն ընկրկել դժվարությունների առաջ եւ Աստվածամոր պես ընդունել են Տիրոջ աղախինը լինելու մեծ օրհնությունը: Մեր մայրերն իրենց քաջարի զավակներին մշտապես սնել ու կրթել են իրենց սիրո մեջ շաղախած հավատքով, հայրենասիրությամբ, արիությամբ եւ անձնագոհությամբ:

Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, Ավետման տոնի բարի լուրը մեր սրտերում՝ աղոթք ենք վերառաքում առ բարին Աստված, որպեսզի Երկնավորն Իր օրհնության ներքո պահպանի ձեզ եւ ձեր զավակներին՝ քաջառողջ ու երջանիկ: Մեր մաղթանքն է, որ սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ առ մեր Տերը հավատի եւ նվիրվածության, ընտանիքի եւ հայրենիքի հանդեպ ձեր սիրո ջերմությամբ հասակ առնեն մեր ժողովրդի զավակները:

Թող Տերն առատացնի ձեր շնորհները եւ օրհնի ու պահպանի լինի ձեզ ձեր կյանքի բոլոր օրերում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներն ու սերը բոլ լինեն ամենքիդ հետ. ամեն:

Օրհնությամբ՝
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ
ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ



Մեծարգո՝ Նախագահ Հայաստանի Հանրապետության տիար Արմեն Սարգսյան, Մեծարգո՝ վաստակյալ Նախագահ տիար Սերժ Սարգսյան, Մեծարգո՝ Նախագահ Արցախի Հանրապետության տիար Բակո Սահակյան, Հարգարժան Նախագահ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տիար Արա Բաբլոյան, Բարձրապատիվ՝ հոգեւոր հայրեր, պատվարժան պետական այրեր, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, Սիրելի՛ ներկաներ,

Ուրախությամբ ողջունում եւ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի երդմնակալության առիթով: Փառք ենք մատուցում Բարձրյալ Տիրոջը, որ Իր ողորմությամբ եւ երկնառաջ շնորհներով մեր ժողովուրդը հայրենի պետության հովանու ներքո շարունակում է ապրել՝ իր առաջընթաց կյանքը կերտելու անխախտ հույսով ու հավատով:

Մեր ժողովուրդը հայրենի պետականությունը վերականգնելու համար մաքառումների երկար ճանապարհ է անցել՝ դիմագրավելով բազմաթիվ փորձությունների: Հայոց նորոթյա անկախ պետականությունը մեր ազատատենչ ոգու եւ հավաքական կամքի ձեռքբերումն է, մեր պայքարի եւ մաքառումների պսակն ու դափնին, մեր ժողովրդի բարօր ու առաջընթաց կյանքի գրավականը: Անկախ մեր պետականությունը մեր ողջ ժողովրդի արժանապատվությունն ու հպարտությունն է, սպեղանին մեր կրոնատների ու վշտերի, վկայությունը մեր վերհառնումի եւ հայրենակերտումի նախանձախնդրության: Չորեղ ու ամուր պետականություն կերտելու ճանապարհին մեր երկիրը, արդարեւ, վճռորոշ վերափոխումներ է ապրել, ձեռքբերումներ արձանագրել, որոնք կերտվել են աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքի պայծառության տեսլականով, արդարության հաղթանակի հավատով՝ ազգիս զավակներին միավորելով հայրենիքը գորացնելու ձգտումով եւ հայրենիքով զորեղ լինելու գիտակցությամբ:

Հայաստանի Հանրապետության մեծարգո՝ Նախագահ տիար Արմեն Սարգսյան, Մեր օրհնությունը, շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ՝ Նախագահի բարձր պաշտոնում ընտրվելու եւ երդմնակալության առիթով: Մեր երկրի կյանքում Դուք արդյունավոր ջանքեր եք բերել որպես Հայաստանի Հանրապետության վարչապետ, հաջողություններ արձանագրել դիվանագիտական ասպարեզում, նաեւ ազնիվ բարեգործություններով ներդրում բերել ազգային-եկեղեցական մեր անդամատանում: Այսօր երդմնակալության այս արարողությամբ Դուք վերահաստատում եք Ձեր ուխտը հայրենիքին եւ մեր ժողովրդին ամենայն պատրաստակամությամբ ու հանձնառությամբ ծառայելու, ջանք ու եռանդ բերելու մեր երկրի զարգացման, մեր ժողովրդի բարօրության, հայրության համախմբման եւ լուսավոր ապագայի համար: Ձեր հարուստ կենսափորձը, հայրենիքում ու սփյուռքում լայն ճանաչումը մե-



ծապես պիտի նպաստեն առավել արգասավորելու Ձեր ծառայությունը Նախագահի բարձր պատասխանատվության մեջ:

Երդմնակալության արարողությունը առիթ է նաեւ անդրադառնալու յուրաքանչյուրիս հանձնառությանն ու պատասխանատվությանը՝ նախանձախորությամբ շարունակելու միասնական մեր ջանքերը՝ հանուն ազգային նպատակների իրագործման: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որ դարձրե շարունակ արթուն է պահել անկախության վերականգնման մեր ժողովրդի իղձը, օրհնել ու քաջալերել մեր արդար պայքարները, այսօր էլ զորակից է հայրենի պետությանը եւ ձեզ, մեծարգո՝ նորընտիր Նախագահ,

Ձեր ազգանվեր ու հայրենասեր ծառայության ճանապարհին: Սրբազան Է մեր հայրենիքը՝ իր բազմադարյա պատմությամբ ու նվիրական արժեքներով, իր հերոսներով ու նահատակներով, հայրենասեր երախտարժան իր զավակներով: Այս նվիրական զգացումներով Մեր հորդորն ենք հղում մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս՝ հավատով ու միասնությամբ հաղթահարելու ազգային ու հայրենական անդամատանում ծառացած խնդիրները եւ դարձնելու մեր երկիրը շեն ու բարօր, պայծառ ու բարգավաճ:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Հայաստանի Հանրապետության երրորդ Նախագահ տիար Սերժ Սարգսյանին՝ անցնող տարիներին մեր երկրին ու ժողովրդին բերած նվիրյալ ծառայության համար: Մեծարգո՝ տիար Սերժ Սարգսյան, Դուք կանգնած եք եղել մեր պետականության վերակերտման ակունքներում: Ձեզ վիճակված էր դժվարին պայմաններում առաջնորդելու մեր երկիրը՝ դիմագրավելով ներքին ու արտաքին մարտահրավերները, առաջ ընթանալու եւ իրագործելու ազգանպաստ ծրագրեր, ջանքեր բերելու միջազգային ասպարեզում մեր պետության հեղինակության բարձրացման, միջպետական հարաբերությունների զորացման, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման, մեր երկրի առջեւ ծառացած խնդիրների հաղթահարման գործում: Տիրոջ պահպանությունը հայցելով՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, արեւշատ կյանք եւ հաջողություններ Ձեր հետագա գործունեության մեջ: Աղոթում ենք աշխարհի խաղաղության, մեր

հայրենիքի, մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու երջանիկ կյանքի համար: Մեր աղոթքն ենք բարձրացնում Ձեզ համար, մեծարգո՝ Նախագահ տիար Արմեն Սարգսյան՝ հայցելով Տիրոջ օրհնությունն ու առաջնորդությունը Ձեզ՝ Ձեր բարձր ու պատասխանատու առաքելության մեջ: Աղոթք ենք բարձրացնում հայոց պետական ավագանու համար՝ մաղթելով նոր ձեռքբերումներ ի սեր մեր հայրենիքի եւ ժողովրդի: Թող Տերն օրհնի Հայաստան մեր երկիրը, Արցախն ու Սփյուռքը՝ միշտ պահպանելով Իր Սուրբ Աջի խնամքի ու հովանու ներքո՝ շինության, խաղաղության եւ անսասանության մեջ այսօր եւ միշտ: Ամեն:

Մարտի 25-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց Ծաղկազարդը, որը խորհրդանշում է մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ մարդեղացյալ Աստվածորդու հաղթական մուտքը Երուսաղեմ։

Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ։ Պատարագին էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը։

Մուշեղ սրբազանն իր քարոզում անդրադարձավ օրվա խորհրդին՝ ի մասնավորի նշելով. «Այսօր՝ շուրջ երկու հազար տարի հետո, մենք հավաքվել ենք այս սուրբ եկեղեցում՝ տոնախմբելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ։ ...Շատերի համար Հիսուս եկել էր ֆիզիկական փրկություն պարգեւելու, իսկ ոմանց համար էլ Քրիստոս եկել էր հոգու փրկություն պարգեւելու։ Մի սովոր, հոծ բազմության համար Նա թագավոր էր. ոմանց համար՝ թագավոր երկրի վրա, իսկ ոմանց համար՝ թագավոր երկնքում։ «Ո՛վ է Նա», - հարցնում էին բոլորը։ Պատասխանն այստեղ էր՝ Նա Հիսուս Քրիստոսն էր, որին հավատացին շատերը, իսկ այսօր արդեն՝ սփարդավորներ։ Հիսուս Քրիստոսն էր, որ իր կյանքը տվեց իր արա-



րածների համար, որպեսզի ապրեն նրանք եւ առավել կյանք ունենան։

...Սիրելիներ, հավատքը դեպի Նա, Ով իր կյանքը չինայեց յուրաքանչյուրիս համար, տարածվեց եւ հասավ մինչեւ մեր օրերը։ Եվ մենք այստեղ՝ այս սուրբ կամարների ներքո, տեսնում ենք, թե ինչպես մանուկներ, արք եւ կանաք ցնծում են, որովհետեւ այսօր մենք տոնախմբում ենք Ծաղկազարդը, եկել ենք ծաղկազարդվելու այս տոնի խորհրդով, եկել ենք միանալու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Նրա մարմինն ու արյունը ճաշակելով։

Սրբազանն իր խոսքում ողջունեց Ծաղկազարդի առիթով Մայր տաճարի ս. Խորանին սպասավորող մանուկներին, ովքեր վաղ առավոտյան ժամանել էին Ս. Էջմիածնի Տավուշի թեմի սահմանամերձ քաղաքներից եւ գյուղերից՝ մասնակցելու Պատարագին եւ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը։ Սրբազանը հորորդեց Պատարագի մասնակիցներին, ըստ տերունավանդ պատվիրանի, նմանվել այս մանուկներին՝ իրենց մաքրության, անմեղության ու պարզության մեջ, ունենալ շիտակ եւ մաքուր հոգի եւ պատրաստ լինել օգնելու եւ կարեկից լինելու միմյանց։

Հիշեցնենք, որ Ծաղկազարդը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից տարի-

ներ առաջ հռչակվել է իբրեւ Մանուկների օրհնության օր։

Վաղ առավոտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից, ծնողների առաջնորդությամբ, բազում մանուկներ արդեն ժամանել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու բարեմաղթանքները։

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր տաճարի առջեւ տեղի ունեցավ Անդաստանի արարողություն, որի ընթացքում հոգեւոր դասն օրհնեց աշխարհի չորս կողմերը։

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց ներկա մանուկներին։ Տերունական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը մանուկներին խաչեր ընծայեց, ներկա ժողովրդին բաժանվեցին ուռնեւու օրհնված ճյուղերը։

Արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Մայր Աթոռ այցելած



Մարտի 29-ին հիշատակվեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից Վերջին ընթրիքի եւ Ս. Հաղորդության խորհրդի հաստատումը։

Ավագ հինգշաբթիի խորհրդական օրվա կապակցությամբ Մայր տաճարում վաղ առավոտյան կատարվեց Ապաշխարողաց կարգը, որի ավարտին Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի կողմից ընթերցվեց ս. Հովհաննես Ոսկեբերան Հայրապետի «Օրհնելալ Է Ամենասուրբ» աղոթքը։

Այնուհետեւ կատարվեց Միջօրեի ժամերգությունը, եւ ապա Մայր Աթոռի միաբան Աղան արք. Երեւակյանը մատուցեց Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից ս. Հաղորդության խորհրդի հաստատման։

Պատարագի ընթացքում ընթերցվեց ս. Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդության մասին» ճառը։ Իսկ հետո արդեն փակվեց Ավագ Խորանի վարագույրը։

Նույն օրը, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ուսկվայի կարգը։

Հընթացս արարողության՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Խորանի վրա դրված ջուրն ու յուղը եւ ապա հոգեպարար շարականների երգակցության ներքո, Աստվածորդու օր-


հնություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց տաճարում ներկա հարյուրավոր հայորդիներին, որից հետո միաբան սարկավագներն օրհնված յուղը բաշխեցին հավատացյալ ժողովրդին։

Մարտի 29-ին՝ ուշ երեկոյան, Նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Խավարման կարգը, որը վերաբերում է Ավագ ուրբաթին։

Առավոտյան ժամերգության ընթացքում Խավարման կարգի խորհրդի շուրջ քարոզեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը։

«Մեր Եկեղեցու ծիսական կյանքի եւ Քրիստոսի կյանքի պատմության ամենից հուզառատ եւ իրադարձություններով հարուստ օրեր ենք ապրում, օրեր, որոնք հագեցած են իրարամերժ, հակադիր զգացումներով եւ պատկերներով։ Մի կողմից անսահման սեր, մյուս կողմից՝ չհաղթահարվող ատելություն, մի կողմից անչափ ազնվություն եւ գիտակցություն, մյուս կողմից՝ խոր եւ անհաղթահարելի նեղություն եւ կեղծություն, մի կողմից լույս, մյուս կողմից՝ խավար, տառապանք եւ պատիժ, մի կողմից երջանկություն, եւ մյուս կողմից՝ ոճբախտություն։

Քրիստոս անսահմանորեն սիրեց մարդկանց, խնամք ցուցաբերեց ոչ միայն իր ան-



նակով ծուկի գալով, լվաց եւ յուղով օծեց տասներկու անձանց ոտքերը։

Այս տարվա Ուսկվայի արարողության համար ընտրվել էին Մայր Աթոռի միաբաններ Ոսկան արք. Գալիաթյանը եւ Մովսիս վրդ. Սարգսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սան Դավիթ սրկ. Հունանյանը, Երեւանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ Հարություն Հակոբյանը եւ Արա Ավագյանը, զինվորներ Տիգրան Թումանյանը եւ Նարեկ Փիրուզյանը, բժիշկ Սամվել Պողոսյանը, Մայր Աթոռի «Եօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Աշոտ Կարապետյանը եւ Հակոբ Մելիքյանը, մանուկներ Հովհաննես Խաչատրյանը եւ Արշակ Զելեգյանը։

միջական աշակերտների, այլ նաեւ այն բոլոր մարդկանց նկատմամբ, ովքեր կարոտ էին իր հոգատարության։ Նա բուժեց կաղերին, կույրերի աչքերին լույս պարգեւեց, խուլերն էլ գտան իրենց լսողությունը, բորոտները բժշկվեցին։ Աշակերտները, ովքեր ընդամենը պարզ ու անհայտ ձկնորսներ էին, կարճ ժամանակամիջոցում դարձան հանրահայտ եւ հանրահռչակ։ Մարդիկ ոչ մի չարություն, ոչ մի անհանդուրժողականություն եւ ոչ մի վատություն չտեսան Քրիստոսից, բայց Քրիստոսի նկատմամբ ատելությունը, թշնամանքն օրեցօր աճում էր ու զորանում, եւ Քրիստոս դարձավ Նախանձի, ատելության եւ թշնամության թիրախ։

Շարունակությունը՝ էջ 4

Ապրիլի 4-ի երեկոյան Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հրավերով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Զահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, եղբայրական այցով ժամանեց Վատիկան՝ մասնակցելու ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցում էին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Մայր Աթոռի



արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրէն Շահեծ վրդ. Անանյանը, Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Թովմա վրդ. Խաչատրյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրէն Վահրամ քնն. Մելիքյանը:

Ապրիլի 5-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը պատվիրակության ուղեկցությամբ մեկնեց Առաքելական պալատ, ուր տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Սրբազան Զահանայապետի առանձնագրույցը:

Հանդիպումից հետո Հռոմի Ֆրանցիսկոս Պապի, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն

Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի տեղի ունեցավ ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությունը:

2015 թ. ապրիլի 12-ին Ս. Պետրոսի տաճարում Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի մատուցած Պատարագի ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հայրերից ս. Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակվել էր «Տիեզերական Եկեղեցու վարդապետ»:

Արձանի մանրակերտը ՀՀ նախագահին էր ընծայաբերել Ֆրանցիսկոս Պապին 2016 թ. Հայաստան կատարած այցի շրջանակներում: Վատիկանի պարտեզում ս. Գրիգոր Նարեկացու բրոնզե արձանը կանգնեցվել է Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր

ձանի հեղինակն է Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Դավիթ Երեւանցին, ճարտարապետը՝ Միքայել Հասրաթյանը:

Էկումենիկ արարողության ընթացքում հնչեցին Հայաստանյայց Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների շարականներ, ընթերցվեց հատված Գրիգոր Նարեկացու աղոթամատյանից, որի ժամանակ տիար Միքայել Միսասյանը կատարեց սրբի արձանի բացումը: Այնուհետեւ Ֆրանցիսկոս Զահանայապետը օրհնեց արձանը, որից հետո Հովհապետը աղոթքով հայցեցին սրբի բարեխոսությունը:

Արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության



Նաեւ Ս. Պետրոսի տաճար: Հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին նվիրված արձանի առջեւ կատարվեց մասնավոր աղոթք:

«Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական բարձր շքանշան Գագիկ Հարությունյանին

Ապրիլի 7-ին՝ Ս. Աստվածածնի Ավետման տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» գիտական կենտրոնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառությամբ բերած բացառիկ ավանդի ու աստվածահաճո ծառայությունների համար ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախա-

պետն իր ողջույնի ու օրհնության խոսքն ուղղեց ներկաներին:

«Սուրբ Հարության տոնական այս օրերին վերստին Մեր շնորհավորանքներն ենք բերում ամենիդ՝

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կենսաբեր ավետիսով: Տոնական այս ուրախության մեջ այսօր մենք համախմբվել ենք Մայր Աթոռում գնահատելու եւ մեծարելու մեր ժողովրդի արժանավոր զավակ, բազմաշնորհ հայորդի տիար Գագիկ Հարությունյանին, ում անունը եւ գործունեությունը քաջածնութեւն հայ հանրությանը:

Տիար Գագիկ Հարությունյանի գործունեությունն աղերսված է Հաստատվել անկախ պետականության վերակերտման պատմությանը: ...Տիար Գագիկ Հարությունյանը կանգնեց անկախ պետականության վերակերտման նվիրյալների շարքերում: Նա պետական համակարգ եկավ խորհրդային տարիների կառավարման փորձառության ու գիտելիքի լուսավոր ապագայի կառուցմանը մասնակցություն բերելու ազնիվ հանձնառությամբ: Ազգային ու պետական մտածելակերպով օժտված՝ նա ստանձնեց բարձր ու պատասխանատու պաշտոններ: ...Ծառայական բոլոր հանգամանքներում նրա գործունեության մեջ գեղակշռող եղավ երկրին ու ժողովրդին օգտակար լինելու գիտակցությունը, հայրենիքի գորացման ու հայության

համախմբման տեսիլքը: Այս մղումով նա իր բոլոր հանձնառություններին մեջ հետապնդեց պետության ու հասարակության շահը, ջանաց ներդրում բերել երկիրը ցնցումներից զերծ պահելու գործին, ներքին կյանքի տագնապների ու պեկոծությունների ժամանակ իր հաշտարար բնավորությամբ ու համոզիչ փաստարկներով կարողացավ նպաստել լարվածության հաղթահարմանը:


Տիար Գագիկ Հարությունյանի վաստակը գնահատարժան է հատկապես մեր երկրում սահմանադրական արդարադատության իրականացման գործում: Կոչվելով ՀՀ Նորահաստատ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնին՝ պարոն Հարությունյանը մեծ ու նշանակալի ավանդ բերեց դատական բարձրագույն իշխանությունը ներկայացնող մարմնի կառավարման ու արդյունավոր գործունեությանը, որն անհրաժեշտ նախապայմաններից է իրավական պետության կերտման համար:

Տիար Գագիկ Հարությունյան իր երկարամյա գործունեության մեջ մշտապես որսւելով է անկեղծ սեր ու նախանձախնդրություն հանդեպ մեր ժողովրդի ազգային ու հոգեւոր արժեքները: Տակավին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանից նա հետեւողականորեն աջակցել է Եկեղեցի-պետություն հարաբերությունների կանոնակարգման ու ամրապնդման, օրենսդրության մեջ մեր Եկեղեցու դերի ու առաքելության պատշաճ ամրագրման գործին: Այսօր, գոհություն լսաւով, Եկեղեցի-պետություն ձեւավորված հարաբերությունները, որում գովելի ավանդ ունի նաեւ տիար Գագիկ Հարությունյանը, ամուր հիմք է դարձել մեր Եկեղեցու առաքելության արդյունավորման եւ մեր հոգեւոր ժառանգության ան-

խաթար պահպանման ու Նոր սերունդներին փոխանցման համար՝ նպաստելով նաեւ մեր երկրի առաջընթացին ու Նոր ձեռքբերումներին: Մեծահարգ տիար Գագիկ Հարությունյան, «Ասպետ Սուրբ Էջմիածնի» շքանշանը հայրապետա-

իր շնորհավորանքներն ու մաղթանքները փոխանցելով մեծարյալին՝ Նորին Սրբությունը Հայրապետական շքանշանով զարդարեց պետական գործի կուրծքը:

Պարգեւաբաշխության առիթով իր ապրումները ներկաներին փոխանցեց տիար Գագիկ Հարությունյանը՝ երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետին եւ Մայր Աթոռին՝ բարձր գնահատանքի ու նման վերաբերմունքի համար: Անդրադառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Նրա երջանկահիշատակ նախորդների հետ իր գրույցներին, ինչպես նաեւ Մայր



գահ, ի. գ. դ. Գագիկ Հարությունյանին շնորհվեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ Հայրապետական շքանշան:

Արարողության մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրէն Պարույր քնն. Ավետիսյանը:

Մեծարյալի կյանքին ու վաստակաշատ գործունեությանն անդրադարձան Գերագույն հոգեւոր խորհրդի եւ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը եւ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

Այնուհետեւ բերվեց Հայրապետական շքանշանը, որից հետո Գարեգին Բ Վեհափառ Հայրա-



կան բարձր պարգեւ է արժանավոր հայորդիներին, ովքեր իրենց գործերով ու հանձնառություններով աջակցում են մեր Եկեղեցու տիրավանդ առաքելության արդյունավորմանը, ներդրում բերում Ս. Էջմիածնի բարեգաղթման մեջ, նպաստում մեր ժողովրդի հոգեւոր կյանքի վերագարթոնքին: Դուք անձնվիրաբար ծառայել եք մեր երկրին ու մեր ժողովրդին, ավանդ բերել Առաքելական մեր Ս. Եկեղեցու եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառությանը: Այսօր գոհունակություն է Հայրապետիս համար այս պատվավոր շքանշանը շնորհել Ձեզ՝ Եկեղեցանվոր Ձեր իրագործումների համար:

Վստահ ենք, որ պարգեւը խրախույս պիտի լինի Ձեզ՝ Նորանոր հանձնառություններով առաջվել հարստացնելու Ձեր բարի ու արժանավոր գործերի վաստակը՝ ազգային ու հոգեւոր մեր կյանքում»:

Աթոռի հետ իր մշտական կապին՝ մեծարյալն իր համոզումն արտահայտեց, որ մարդն առանց հոգեւոր կայուն արժեքների եւ հարստության չի կարող որպէս բանական էակ ինքնադրսւելով: Տիար Հարությունյանը խոսեց նաեւ այն կարեւոր դերակատարության մասին, որ Հայոց Եկեղեցին ունեցավ ինքնության պահպանման եւ հարատեւման գործում: Վերջինս ընդգծեց նաեւ, որ շնորհված պարգեւը լրացուցիչ խթան եւ պարտավորություն կհանդիսանա՝ ավելի ժրգան աշխատելու համար:

Միջոցառմանը երաժշտական կատարումներով հանդես եկան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտ-կատարողները (գեղ. ղեկավար՝ Սիլվա Մեքինյան):

Հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով:



Սկզբը՝ էջ 2

Քրիստոսին հետապնդում էին ինչպես հրեաները, փարիսեցիներն ու դավիդները, այնպես էլ հռոմեացի զինվորները։ Քրիստոս հարվածներ էր ստանում ինչպես օտարներից, այնպես էլ յուրայիններից։ Քրիստոսի աշակերտներից մեկը՝ Յուդան, արծաթսիրության, ազախության պատճառով մատնեց Նրան։ Պետրոսը, որ բազմիցս հավաստիացրել էր իր լիակատար հավատարմության մասին, երբ անգամ ուրացավ Քրիստոսին՝ տառապանքի ու փորձության ամենածանր պահերին։ Եվ Նրան հետեւեցին Նաեւ մյուս աշակերտները։ Քրիստոս մտրակվեց, նվաստաց-

ղոթները, Նրա հույզերը, Նրա կտտանքները, հոգու բողբոջները։ Նույն այդ բողբոջներով, տազնապնդով ենք պատված մենք այսօր այս սուրբ եկեղեցում, որպեսզի չարչարակից լինենք Քրիստոսին՝ մեր Տիրոջը։ Չարչարակից լինենք, բայց Նաեւ երբեք ու երբեք չընկրկենք... Քրիստոս անսահմանորեն սիրեց տրտմությունը, բայց երբեք չվախեցավ լացից ու տրտմությունից։ Քրիստոս սիրելով սիրեց լույսը, բայց երբեք չերկնչեց խավարից, Նա սիրեց ու նվիրվեց հաղթանակին, բայց երբեք չընկրկեց այդ հաղթանակի համար տառապանքով հատուցելու հեռանկարից»,- նշեց Արշակ Եպիսկոպոսը։



վեց, անարգվեց, չարչարանքների ենթարկվեց, խաչը բարձրացվեց, եւ թվում էր, թե չկա տառապանքի ու չարչարանքների որեւէ այլ տեսակ, որը չգործածվեր մեր Տիրոջ նկատմամբ։

...Այսօր մենք համախմբվել ենք այս սուրբ տաճարում ոչ թե ընդամենը հիշելու պատմական այս իրադարձությունները, ոչ թե հաստատելու դրանց պատմական իսկությունը, այլ վերապրելու այդ իրադարձությունները։ Եկե՛ք մենք Քրիստոսին չարչարակից լինելու, կիսելու Նրա տառապանքները, եկե՛ք մենք հաղորդ դառնալու Նրա չարչարանքներին։ Մենք զգում ենք ցավի ու տառապանքի այն ծայները, որոնք արձակվում էր Քրիստոս՝ Իրեն չարչարանքի ենթարկելու պահերին, լսում ենք արյուն, քրտինք դարձած Նրա ա-

Սրբազան հայրը հորդորեց ներկաներին՝ առաջնորդվել Քրիստոսի սիրով, համառորեն ընդառաջ գնալ փորձություններին՝ հասնելու համար հաղթական վախճանին։

Մարտի 31-ին՝ Ավագ շաբաթ օրը, երեկոյան, մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ամենայն Յայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց ճրագալույցի ս. Պատարագ։ Պատարագիչն էր Փառնե արք. Ավետիքյանը։

Մինչ Պատարագը կատարվեց ճաշու երրորդ ժամերգությունը, ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ կարդացին Դանիել մարգարեի թուղթը։



ԱՎԱԳ ԾԱԲԱԹԸ

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի բարերարներ եւ բազում ուխտավոր հայորդիներ։ Անդրադառնալով մեր կյանքերում Ս. Յարության նպատակին՝ Փառնե սրբազանը հավելեց. «Ս. Յարությունը ներկայացվում է որպես մահվան դեմ հաղթանակի տոնակատարություն։ Այն մեր Տիրոջ հաղթանակն է ընդդեմ մահվան, քրիստոնեական կյանքի առանցքն ու եությունն է, ինչպես Նաեւ մեր անձերի հարության կարելիությունն է հանդիսանում։ Երբ Աստված մարդուն ստեղծեց, Նրան օժտեց հա-

օրվա մեջ նույնիսկ հարյուր անգամ մեղանչելուց, անձնասիրությունը մարդու նկարագիրն է, մարդը մշտապես սայթաքում է, իր նախասիրություններն է ուզում գործածել։ Այս իմաստով Քրիստոսի Ս. Յարությունը մեզ ավետում է, որ մարդուն ընձեռված է կարելիությունը փրկության՝ Քրիստոսի խաչելությամբ եւ մահվամբ։ Նա պետք է մահանար, որպեսզի Իր մահվամբ քավեր մարդկության մեղքը՝ վերականգնելով այն իր եղեմական վիճակով հանդերձ։ Մենք վերականգնված ենք Աստծո շնորհքի մեջ, ո-



վիտենական կյանքի կարելիությամբ, մարդուն տվեց ընտրելու կարողություն՝ դառնալու Աստծո կամքի գործածողը կամ էլ Աստծո կամքին ընդդիմացողը։ Մարդը, հակառակվելով Աստծո կամքին, ընտրեց իր կարգավիճակը, Նա մահվան դատապարտվեց, ինչպես Յին Կտակարանում ենք տեսնում։ Սակայն, Ս. Յարությունը հնարավորություն է տալիս ապաշխարելու եւ վերադառնալու իր Նախնի կարգավիճակին։ ...Մարդիկ իրենց կամքով հակադրվել էին Աստծո կամքին, ուստի, ի լրումն ժամանակի, Աստված ուղարկեց Իր վերջին պատգամաբերին՝ Իր Միածին Որդուն, որպեսզի աշխարհը փրկվի Նրանով։ Նրա աշխարհ

րովհետեւ Աստված այդպես կամեցավ մեզանից յուրաքանչյուրի համար։ Յարթանակը, որ տարավ Քրիստոս մահվան դեմ, Նաեւ մեր հաղթանակն է, որովհետեւ Աստծո կամքին հնազանդ ապրելով՝ մենք նույնպես պետք է հաղթական կանգնենք մահվան դեմ։ Քրիստոսի հաղթական Յարությունը մահվան դեմ Նաեւ քրիստոնյայի հաղթանակի տոնն է, մեզանից յուրաքանչյուրը դրա կարիքն ունի։ Կյանքն առանց հարության հեռանկարի՝ անիմաստ մի ճանապարհորդություն է տիեզերքում, մենք մեր կյանքի ընթացքը պետք է այնպես դասավորենք, որ արժանի դառնանք այդ հաղթանակին»։



գալուստը մարդու փրկության համար Աստծո՝ մարդու հանդեպ ունեցած սիրո ամենավերջին արտահայտությունն էր, բայց Քրիստոսի քարոզներն ու հրաշքները, ծավալվելով հանդերձ, չհասան իրենց նպատակին։ ...Նույնիսկ եթե հրեա ժողովուրդն ամբողջությամբ դարձի զարե եւ հետեւեր Քրիստոսին, խաչելությունն անխուսփելիորեն անհրաժեշտ էր. խաչելության դրդապատճառը մարդկության մեղավորությունն ու սեփական կամքի ընտրությունն էր. մեղքը պատճառ դարձավ անկման եւ մարդկության մահանալուն։ Աստված կարող էր միայն քավել մարդկության մեղքն Իր իսկ մահով, Իր իսկ հանձնառությամբ, քանի մարդկության փրկության համար այլ միջոց չկար։ ...Մեր փրկությունն իրականանում է՝ հավատալով Քրիստոսի եւ Աստծո կամքի գործադրությամբ։ ...Մարդը մեղանչական է, ոչ մեկս ապահովագրված չենք

Յավարտ Պատարագի՝ Ամենայն Յայոց Կաթողիկոսը, բարձրանալով Ավագ հորան, ս. Սեղանի կանթեղից վառեց Աստվածորդուն խորհրդանշող կենսատու մոմը, որպեսզի հավատացյալները հնարավորություն ունենան իրենց հարկերը տանելու հարուցյալ Փրկչի կենդանարար լույսը։

Պատարագից հետո հոգեւորականների թափորը Մայր տաճարից առաջնորդվեց դեպի Յին Վեհարան, ուր կատարվեց Նաեւ Ս. Յարության առաջին տնօրինեցի արարողությունը։

Ապրիլի 1-ին մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարության տոնի առիթով Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը։

Սրբազան արարողությունն սկսվեց հայրապետական թափորով, որը Վեհարանից Ամենայն Յայոց Կաթողիկոսին, Յայաստանի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. Ձաղկազարդից Ս. Հարություն



Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին եւ տիկին Ռիտա Սարգսյանին ամպհովանիով առաջնորդեց դեպի Մայր տաճար: Ս. Տրդատի կամարի եւ տաճարի զանգակատան առջեւ հոգեւորականաց թափորին ծափողջույններով դիմավորեցին տոնի առիթով Մայր Աթոռ ժամանած հարյուրավոր ուխտավորներ: Նրանց մեջ էին նաեւ Մայր Աթոռի «Եօրեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտները, ՀԲԸՄ Երեւանի սկաւտական խմբի անդամները:

Հայրապետական ամպհովանին այս տարի կրում էին ՀՀ նախագահի խորհրդական Ֆելիքս Փիրումյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը, Ապարանի քաղաքապետ Կարեն Եղիազարյանը եւ Սարգսյանի ընտանիքի անդամները: Սարգսյանի ընտանիքի անդամները կատարվել էր այս տարի տոնախմբվող մայիսյան հեղուկամարտերի 100-ամյակի կապակցությամբ:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որպէս առընթերականեր,

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԾՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ
ՄԵՐ ՏԵՐ ՀԻՄՈՒՄ ԶԵՐԻՍՏԱՆԻ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՎ**

Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Ե՛ս եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յԻս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ՛»
Հովի. 11. 25-26

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Զործարար Սուրբ Հարության հրաշագործ տոնին, ուրախությունն ու խնդությունը մեր հոգիներում, ծայնակից ենք հրեշտակներին՝ փոխանցելով միմյանց «Զործարար յարեալ» կենարար ավետիսը: Թափուր է Տիրոջ գերեզմանը, հայտնված է Նրա աստվածային զորությունը, եւ իրական եւ մահվան պարտությունն ու կյանքի հաղթանակը: Այսօր հարություն առած Զործարար Իր բոլոր հետեւորդներին բերում է հավիտենական կյանքի

Նրա հետ կյանք ունենանք եւ ժառանգակից լինենք երկնային արքայությանը:

Հավատալ Զործարարի Հարությունը նշանակում է Սիմոն Կյուրենացու պէս անտրտունք Զործարարի խաչը կրել՝ կյանքի հաղթանակի աներկբա վստահությամբ, Հովսեփ Արիմաթացու նման բարեգործություններ կատարել, յուզաբեր կանանց նման հավատքն ու հավատարմությունը պահպանել եւ Զործարարի Հարության ուրախությունը սփռել, առաքյալների պէս աշխարհը Զործարարի Հարության լույսով լուսավորել: Այսպէս միայն կարելի է արժանանալ Փրկչի խոստմանը՝ հավատքի զորությամբ մահվան իշխանությունը թողափելու եւ հավիտյան ապրելու:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Զործարարի Հարության հրաշագործ իրողությունը մարդու եւ աշխարհի փրկության միջոցն է, աստվածային անսահման սիրո ու հոգածության վկայությունը, նեղությունների ու դժվարությունների հաղթահարման զորությունը: Թովմասի նման երկմտող աշխարհին հարուցյալ Զործարար ցույց է տալիս Իր վերքերը, որպէսզի բուժվեն պատերազմների ու աղետների պատճառած վերքերն աշխարհի: Ցույց է տալիս Իր չարչարանքների հետքերը, որպէսզի դադարեն մարդկային հոգու տառապանքները, լռեն ատելության ձայները,



մերժվեն կործանարար ուղիները, որպէսզի գալիքի հանդէպ վստահություն փնտրող մարդկությունն ընդունի Փրկչի Հարության զորությունը՝ առաքյալի պէս բացականչելով՝ Տեր իմ եւ Աստված իմ (Հովի. 20. 28):

Աստվածատուր այդ զորությամբ ու շնորհով է հարատեւել եւ մեր ժողովուրդը՝ պատմության մեջ դիմակայելով դառը հարվածների ու կերտելով իր ձեռքբերումները: Զործարար, հարության ու փրկության հավատքով մենք վեր հանեցինք մեր խաչելություններից, վերահաստատեցինք մեր պետականությունը, ձեռնամուխ եղանք նեղությունները թողափելուն, մեր իրավունքների պաշտպանությանը եւ առավել բարձր գալիքի կերտմանը: Մեր ժողովրդի առաջընթացը, մեր պետության հզորացումը եւ ի սփյուռս աշխարհի մեր կյանքի պայծառությունը պայմանավորված են յուրաքանչյուրիս մեջ Զործարարի ներկայությամբ, Նրա Հարության զորության ներգործությամբ եւ մեր արժանավորությամբ Փրկչի խոստմանը: «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի»:

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, շարունակենք ապրել ու գործել Զործարարի հետ: Մեր ընտանիքներում խնամենք ու վառ պահենք հավատքի լույսը, հասարակական ու ազգային մեր կյանքում հաստատուն պահենք մեր կյանքում հաստատուն պահենք:

հենք միմյանց հանդէպ հոգածությունն ու զորակցությունը, սերն ու միասնությունը: Հարունակենք ապրել հավատքով, որպէսզի այսօր ինչո՞ղ «Զործարար յարեալ» ավետիսը զորացնի մեզ ապագայի հանդէպ լավատեւությամբ ու վստահությամբ, կամքով ու կորովով՝ հակառակ ամեն արգելքի ու նեղության, ջանք թափելու, ստեղծելու, հոգալու, որ իրագործենք առաջընթացի մեր նպատակները, հայրենաշէն մեր ծրագրերն ու ազգային իղձերը: Թող մեր սրտերը քաջալերվեն այսօր մեզ հայտնվող հարուցյալ Տիրոջով՝ սիրով եւ միասնությամբ ընթանալու ազատ սուր կյանքի մեր ուղին՝ միշտ հավատարիմ մնալով մեր Տիրոջ պատվիրաններին եւ հաստատուն պահելով մեր ընթացքը դեպի հավիտենություն:

Մեր Տեր Հիսուս Զործարարի Հարության բերկալի ավետիսով ողջունյ ենք բերում Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Մանուկյանին: Աղոթում ենք հիվանդության մահճում գտնվող Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուրբաբայան Պատրիարքի համար: Ի Զործարար սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ Նրանց հավատավոր հոտին: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիգրան Մարտիրոսյանին՝ Առաջին տիկնոջ հետ, Նորընտիր Նախագահ Տիգրան Արմեն Սարգսյանին, ողջունյ ենք հղում Արցախի Հանրապետության Նախագահ Տիգրան Բակոյ Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագի-



սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհաննէս Զակարյանը եւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշէղ եպս Բաբայանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին նաեւ Նորընտիր Նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԱԺ Նախագահ Արա Բաբայանը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Արարողության ընթացքում համայն հայության հոգեւոր կենտրոնից Հայոց Հովհաննէս ավետեց Զործարարի հրաշափառ Ս. Հարության ցնծալի լուրը՝ այս առիթով հայրապետական իր պատգամը՝ իղելով աշխարհասփյուռ հայ ժողովրդին:

բերկալի խոստումը. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի»:

Զործարարի Հարության ողջունը փոխանցելով՝ մենք, սիրելիներ, հաստատում ենք մեր հավատքը, որը հիմնված է Հարության տիեզերանորոգ հրաշքի վրա: Հավատում ենք, որ Զործարարի Հարությամբ անմահության ու հավիտենական կյանքի արշալույսը ցրել է կորստաբեր մեղքի խավարը: Հավատում ենք, որ մահվան առաջ անգոր մարդկային կյանքը վերափոխվում է երկնային զորությամբ, ժամանակավորը վերածվում է հավիտենական գոյության: Հավատում ենք, որ Փրկչին ու Նրա անմահության շնորհին հաղորդակցումը Նորոգում է կյանքը, խաչերը դարձնում ծաղկալ, գողգոթաները՝ հաղթության բարձունքներ: Հավատում ենք, այո՛, որ մարդկային մեր տկար ուժերին ընդառաջ եկող Աստծո Սուրբ Հոգին լուսավորում է մեր հոգեւոր տեսողությունը եւ զորացնում մեզ՝ ընթանալու մեղքից դեպի առաքինություն, ընթանալու դեպի մեր Տերը, որպէսզի

տական առաքելությունների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հավատավոր մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփյուռս:

Աղոթում ենք առ մեր Տերը Հիսուս Զործարար, որ մեր հայրենիքում ու ողջ աշխարհում մշտապէս սփռված մնան Իր Հարության կենարար պարգէները, խաղաղությունը հաստատվի աշխարհում, մարդկանց սրտերում, մեր երկրի սահմաններում: Հայցում ենք, որ Փրկչի Հարության շնորհներով զորացած՝ Մեր զավակների ամեն գործ զարթնքն ու լուսավորություն բերի ազգային մեր կյանքին, եւ աստվածաշնորհի պարգէները հովանի լինեն մեր ժողովրդին՝ այսօր եւ միշտ ցնծությամբ ավետելու:

«Զործարար յարեալ ի մեռելոց. Օրհնեալ է Յարութիւնն Զործարար»:

Հավարտ ս. Պատարագի, Մայր Աթոռի «Ալեք եւ Մարի Մանուկյան» զանձատանը տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Հարության տոնի առիթով վերստին շնորհավորեց ներկաներին՝ փոխանցելով «Զործարար յարեալ ի մեռելոց» կենդանարար ավետիսը:

Եկեղեցականների Սուրբ Նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Չայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների Սուրբ Նշանակումներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հարություն արքեպ Կիրակոսյանը, ազատվելով Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնում ստանձնած պարտականություններից, հոգեւոր ծառայության է կոչվել Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Չավեն վրդ. Յագիչյանը, ազատվելով Մայր Աթոռի լուսարարապետությունում ստանձնած պարտականություններից, հոգեւոր սպասավորությունը կշարունակի Եգիպտոսի հայոց թեմում:

Լրատվական նյութերը ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻՇՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Սկիզբը՝ 2017-ի թիվ 16-19, 21-24

Գալով պրոֆեսոր Ռասսելի շատ հետապնդած եւ հայերին վերագրած արյունապղծությանը՝ ուզում եմ նաեւ հիշեցնել, որ Հին Կտակարանի Աստվածը Երեմիա մարգարէի բերանով այսպէս է դատապարտում Իր ժողովրդին. «... որդիքն քո թողին զիս եւ երդնուին ի չաստուածսն. յագեցուցի զնոսա՝ եւ շնային, եւ ի պռնկանոցս օթեւանս առնէին. ծիք մատակախանծք եղեն, իւրաքանչիւր ի կին ընկերի իւրոյ վրնջէին» (Երեմիա, Ե, 7-8), որի համար Աստված հրով կործանեց ախտերով վարակված Սողոմն ու Գոմորը՝ սողոմական համատարած վարակը վերացնելու համար: Իսկ սարդեսացի եպիսկոպոս Մելիտոնը մ. թ. II դարում խստորեն դատապարտում է իր ժամանակ տիրող ծայրահեղ հոռի տարատեսակ արյունապիղծ սեռական բարքերը, եւ ես, անկախ

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նրա դավանած կրոնական ուսմունքից, բարձր եմ գնահատում այդ բարոյական ընդվզումը, եւ ինձ համար ամենաչնչին չափով արժեք չունի, եթէ որեւէ մէկն իր հակաբնական սեռական շեղումների պատճառով իրեն խայթված զգա «տղամարդը տղամարդու հետ հարաբերվելու» Մելիտոնի ծաղրածանակից. «Այլեւս ավելացնելու բան չունեն, քանզի մարդկանց մեջ ինչքան ասես տարօրինակ, սոսկալի եւ անպարկեշտ բան է կուտակվել: Հայրը - դստեր մահճում, որդին - մոր, եղբայրը - քրոջ, իսկ **տղամարդը - տղամարդու** եւ «ամեն ոք վրնջում էր մերձավորի կնոջ վրա» (*Святитель Мелитон Сардийский. О Пасхе. Пер. с греч. вером. Илариона (Алфеева). Москва, 1998. Крутицкое Патриаршее Подворье*, 53): Իսկ Պողոս առաքյալը, որ քրիստոնյաներին հաւածելու ժամանակ տառապում էր իր ազգակիցների համար մի փրկություն գտնելու հույսով, ի Քրիստոս հավատալուց հետո էլ ավելի դատապարտեց իր ազգակիցներին՝ խրատելով. «Եղէ ընդ Հրեայսն իբրեւ զՀրեայ, զի զՀրեայսն շահեցայց... ընդ անօրէնս եղէ իբրեւ զանօրէն, իբր ոչ եթէ անօրէն ինչ էի յԱստուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիստոսի, զի շահեցայց զանօրէնս...» (*Ա. Կորնթ. , Թ, 20, 21*) - «Եւ մի՛ պռնկեցուք, որպէս ոմանք պռնկեցան ի նոցանէ (ի հրէիցն), եւ անկան ի միում աւուր քսան եւ չորք հազարք. եւ մի՛ փորձեցուք զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին, եւ յօձից անտի սատակեցան...» (*Ա Կորնթ. Ժ, 8-9*): Ուսանողական տարիներից տառապանքի խոր պահեր եմ ապրել ավստրիացի մեծ

ռոմանտիկ բանաստեղծ Նիկոլաուս Լե-նաուի «Սավոնարոլա» ցնցող պոեմից, որը ես մանրամասն քննել եմ «Լենաուի փիլիսոփայական պոեմները» իմ առաջին գիտականատեսակության մեջ: Հռոմի Լուկրեցիոս Բորջիա պապը խարույկի վրա այրել տվեց ֆլորենցիացի արքեպիսկոպոս Սավոնարոլային, որովհետեւ մեծ Ալիգերի Դանթեի ըմբոստ հայրենակիցը մեղադրում էր պապին արյունապղծության համար, եւ այդ վրէժխնդիր ողջակիզման պատճառը ոչ թէ այն էր, որ մեղադրանքն անտեղի եւ անհիմն էր, այլ որ Ներքուստ անպատմելի ծանր էին պապի ապրած սեփական մեղքի գիտակցումը եւ վիրավորանքը: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռասսելի անմիջական ջանքերով իր դեկավարած Հայագիտական ամբիոնը վերածվել է հակահայագիտական եւ սեռապաթոլոգիական քարոզչական կենտրոնի: Նշեմ նաեւ, որ Ռասսելը հիանալի տիրապետում է հայոց լեզվին եւ իր հեղինակած գրքերից դուրս, հայոց լեզվի իր իմացության շնորհիվ, չէրմ համակրանք է վայելում ամբիկախայության շրջանում, հատկապէս որ վերջին ժամանակներս հաստատվել է Ֆրեզնոյում: Ներկա դարի սկզբին գերապատիվ արքեպիսկոպոս, լուսահոգի Մեսրոպ Աշճյանը մի ուղեւորություն կազմակերպեց դեպի ցեղասպանության ենթարկված Արեւմտյան Հայաստան, որին հրավիրեց մասնակցելու եւ արգո պրոֆեսոր Զ. Ռ. Ռասսելին՝ հուսալով փոխել նրա վերաբերմունքը դեպի հայությունը: Ուղեւորության ժամանակ

կատարված տեսաֆիլմից հիշում եմ հետեւյալ դրվագը. եթէ չեմ սխալվում, Եղեւսիայի մոտերքում վաղ լուսադեմին երջանկահիշատակ արքեպիսկոպոսը եւ պրոֆեսորը անակնկալ հանդիպում են մի կնոջ, որ առավոտ կանուխ, մարդկանց աչքից հեռու, խնամքով սրբում է քրիստոնեական մատուռի քարերի փոշին: Սոստեւալով կնոջը՝ հարցնում են, թէ ով է ինքը, մատուռի սպասուհի՞ն է: Վախեցած կինը, համոզվելով, որ այս պատվական անծինք քրիստոնյա են եւ ոչ վտանգավոր, պատասխանում է, թէ ինքը եկեղեցու սպասուհի չէ, այլ մանկությունից բռնի մահմեդական են դարձրել, անունը Սահիկա է (Երեւի Սաթի՞կ), եւ իր հոգու փրկության համար, բոլորից թաքուն, խնամում է այս մատուռը: Թվում է, թէ այս եւ այլ շատ նման դրվագներ պետք է վերափոխել պրոֆեսորին, սակայն ուղեւորությունից վերադառնալուց որոշ ժամանակ անց Հարվարդի պրոֆեսորը հրատարակեց մի նոր գիրք՝ Եղիշէ Չարենցի համասեռականության մասին: Իմ ներկա ուսումնասիրությանը զուգահեռ՝ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում տպագրվող մի այլ հոդվածում հիշատակվում է Եղիշէ Չարենցի բիսեքսուալիզմի մասին բազմիցս քննադատված Ռասսելի գիրքը, որտեղ իբր Չարենցի պոեզիան հետազոտելիս «սեքսապաթոլոգ պրոֆեսորը» եկել է այդպիսի եզրակացության:

Շարունակությունը՝ էջ 7

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱՅՈՒ ԽԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 5

Կան իսնելուկներ, որոնք երեխայի միտքը սրելուց զատ՝ ձեւավորում են նրա գեղարվեստական ճաշակը՝ ներգործելով երեւակայության եւ զգացմունքային աշխարհի վրա:

*Թագուոր տղայ աղուոր տեսակ,
Չամէն հագին կանաչ դիպակ,
Խաշինք ունի անթիւ բաւակ,
Շատ գեր ձիան որձ ու մատակ:
Մանուկ մի կայր զօրեղ հրեղէն,
Խըմեց հատոյց զջուրն ի գետէն.
Ձիուն 'ւ իշուն արար նա քէն:
Հընձեց վերոյց զխոտն ի դաշտէն:
(գարուն)*

❖❖❖

*Տեսի զմանուկ մի որ ծնաներ,
Եւ ի նոյն օրըն մեռաներ.
Յետ թաղելոյն դարձյալ յառներ,
Ի այլ գեղեցիկ զինք ցուցաներ:
(արեգակ)*

Նպատակային են նրա «Հանելուկ-առակները», որոնք գրականության պատմության մեջ առավելապէս դիտված են իբրեւ կյանքի հետ անմիջակնորեն առնչվող ստեղծագործություններ, բանահյուսական տեսակի օգտագործման հետ մեկտեղ գրականության աշխարհականացման արտահայտություններ: Անշուշտ, «Հանելուկներում» առկա է ուսումնական նպատակադրումը՝ տալ ժամանակի համար անհրաժեշտ գիտելիքներ կրոնի պատմությունից, հայոց պատմությունից, բուսական ու կենդանական աշխարհից, բնության երեւոյթներից, բայց խնդիրն այստեղ միայն ուսուցանելիք նյութը չէ, այլ նաեւ միջոցները, որով հեղինակը սրում է ընթերցողի միտքը, բեւեռում ուշադրությունը երեւոյթի էական կողմի վրա, զարգացնում կռահողունակությունը եւ այլն: Այսպէս, հանելուկների մեջ մի շարք կա, որտեղ հեղինակը նշում է առարկայի մի երկու-երեք հատկանիշ, եւ երեքային է մնում ի մի բերել դրանք՝ համադրել ու տալ հանելուկի լուծումը: Այսպէս.

*Լըսէ, եղբայր, քաջ կարելոր
Առ քեզ նըշան՝ ինքն է բոլոր.
Նա եւղ ունի, կեղէն ոսկոր,
Կըտուեա եւ կեր ըզգոռզն աղուոր:
(ընկույզ)
Կա՛մ՝*

*Ի յելանելէն Է փըրփըրակ,
Երբեմն լինի փոշետեսակ,
Նա դիզանայ որպէս բամբակ,
Երկրի սերմանց Է օժանդակ:
(ծյուն)*

Կան նաեւ երգիծանք պարունակող հանելուկներ, որոնք մի ամբողջ դարաշրջանի կենցաղ ու հոգեբանություն են արտացոլում, օրինակ՝ ո՛վ կհամարձակվի բռնակալի երեսին բան ասել, բայց մի զարմանալի բան կա՝ թռչունի մագիլներով, եւ նա ցատկում է բռնակալի երեսի վրա.

*Եկ դու մի՛տ դիր, սիրելի՛,
Իրք մի ասեմ զարմանալի.
Մէկ մի ունի մագիլք հաւի,
Վազէ յերես բըռնակալի:
(սանր)*

Հանելուկներում եւս Շնորհալին երեխայի, մարդու մտահորիզոնից դուրս չէր թողնելու սերը կրթության, գրքի նկատմամբ: Գիրքը նույնպէս հանելուկի առարկա է դառնում.

*Տուն մի տեսի սպիտակ փըռած,
Ու սեւ հաւեր ի ներս թառած.
Ձուս ածէին ցեղք ի ցեղաց,
Լեզուաւ խօսին բանականաց:
(գիրք)*

Արդեն նշվեց, որ Ներսէս Շնորհալու հանելուկները մեծ մասամբ չափածո են՝ 4+4, կամ հայրենների չափով հորինված: Գուսանական արվեստում ընդունված էր հանելուկները երգելով ասել: Սրանից էլ ենթադրվում է, որ Շնորհալու հանելուկներն իրենց տաղաչափված ձեւով պետք է, որ երգվեն: Շնորհալին իր հանելուկներում չի մոռացել անցավոր մարդ էակի հեղհեղուկ բախտը, եւ որ «աշխարհը հյուրանոց է, մարդիկը հյուր են. Կուգան ու կերթան», ինչպէս հետագայում բանաձեւել է Զիվանին.

*Պանդոկ մի կայր վերայ երկրի
Ի յանցաւոր ճանապարհի.
Որ անձանօթըն ի նմա գային,
Եւ ծանօ՞թըն գընային:
Մինչ հիւըրն գայր՝ մեծարէին,
Եւ մինչ գընայր՝ կողոպտէին,
Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,
Այլ գըրվանդակն խըլէին:*

Կենցաղային-առօրյա ժամանցի համար է գրել նա իր հանելուկները: «Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար եւ առակս խորհրդաբարս ի գրոց, եւ հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասացեն ի գիւնարբուս եւ ի հարսանիս», - գրել է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Որպէսզի զվարճությունն անբովանդակ կամ ինքնանպատակ չլինի, բանաստեղծը դրանցով եւս աշխատում է օգտակար գիտելիքներ տալ:

Ահա թթենին, որի տերեւներով շերամի որոջ «անգին դիպակ» է պատրաստում.

*Չայն ծառըն տես, որ կու ծաղկի,
Տերեւն է իւր գերդ ըզկաշի,
Նարմով զգեստ մարդկան լինի,
Խիստ վայելուչ եւ ցանկալի:
(թթենի)*


Կարծես որոշակի ծրագրով ստեղծված, սրամիտ ու աշխույժ, երբեմն նուրբ հումորով համեմված հանելուկներում Շնորհալին պատմում է աստվածաշնչյան ու պատմական դեմքերի ու կենդանիների, բույսերի, բնական երեւոյթների, գրականության ու մշակույթի մասին: Հայոց այբուբենին նվիրված հանելուկը լուծելու համար, օրինակ, պետք էր գրագիտություն ունենալ.

*Ի չորս տասէն չորս էառ,
Յրայլն երբեր կացոյց յերեսան.
Ամենն է՝ տասը հազար,
Մէկ պակաս եւ այլն ի լըման:
Ինքըն քառակի փակեաց,
Որ ճարտար մարդիկն իմանան.
Չկէսըն ութն եւ տասն առնէ,
Որ յիմար մարդիկն չիմանան:
(այբուբեն)*

Մի այլ հանելուկում ընդգծվում է քերականության կարեւորությունը.

*Տեսի արիեստ մի ես փոքրիկ,
Յոյժ պիտանի եւ գեղեցիկ.
Ունէր յինքեան երկու դըռնիկ,
Ութեակ թուով պատուհանիկ:*

Ինչպէս արդեն վերելում նշվեց պարզ, բանահյուսական երկի կառուցկիւթյամբ աչքի ընկնող իր հանելուկները Ներսէս Շնորհալին գրել է ժողովրդական-խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, որը հետագայում դարձավ քնարերգության լեզուն: Մանկական գրականության բնագա-



վառում եւս Շնորհալին հետեւորդներ ունեցել է: Հայտնի է, օրինակ, Տիրատուրը (14-րդ դար): Բայց սրանց գործերը հաջորդ դարերում մեծ մասամբ վերագրվել են Շնորհալուն: Հետեւորդներից մեկը հենց Շնորհալու հանելուկների կաղապարով ստեղծել է մի հանելուկ նրա մասին.

*Իշխան մի կայր յեկեղեցի,
'ւ ի բարձրագոյն աստիճան
Ըան գոր չեղել ոք աւելի,
Երգիչ տաղի, շարականի:*

Հանելուկների ավանդույթը փոխանցվել է նաեւ հայ աշուղներին: Հանելուկներ երգով առաջարկելու եւ լուծելու գեղեցիկ ավանդույթը նրանք պահպանել են մինչեւ մեր օրերը: Առարկայի կամ երեւոյթի խտացված հատկանիշների փոխաբերությամբ ու համեմատություններով Շնորհալին ընդլայնում է աշխարհաճանաչողությունը եւ զորացնում միտքը:

Ահա ինչպիսի բանաստեղծական հմայիչ պատկեր է «Երկինք» հանելուկը.

*Եկեղեցին բարձր էր եւ լայն
Անսին շինած էր այն,
Կանթեղեքն ի կախ կան անչըւան,
Ձահերն անձեթ ըզլոյսըն տան:
(երկինք)*

Ակամայից հիշում եմ ժողովրդական ավանդությունն ու Հովհաննէս Թումանյանի «Լուսավորչի կանթեղը»: Չնայած հանելուկի ամբողջական մետաֆորիկ բնույթին՝ այնտեղ լուծման համար եզրեր են հուշված՝ անչվան կախված կանթեղները եւ անձեթ ջահերը իսկույն մղում են միտքը դեպի լուսատու մարմինների աշխարհը՝ երկինք:

Շարունակությունը՝ էջ 7



Սկիզբը՝ թիվ 2, 4-6

1930-ին Թեքեյանի ապրած մի քանի եր-
ջանիկ օրերը կապված են մանավանդ Շ.
Շահնուրի ընկերակցությամբ անցկացրած
փարիզյան շրջանի հետ, որի մասին Շահ-
նուրն իր 1931 թ. օգոստոսի 19 թվակիր ևս-
մակում ես վկայում է՝ «... անցեալ ամա-
ռուան պէս կրկին լաւ օրեր» անցկացնելու
բաղձանք հայտնելով (*Շահնուր Շ., Նամա-
կանի, հ. 3, Վոթերթաուն, 2006, էջ 102*):

Ոչ մի կերպ չլուծելով իր առջեւ ծագած
խնդիրները՝ 1931 թ. հունվարին Թեքե-
յանն արդեն որերորդ անգամ ստիպված է
լինում վերադառնալ Կահիրէ եւ Նորից
ստանձնել «Արեւի» խմբագրապետությու-
նը: Թերթը հրատարակվում է մեծ դժվա-
րություններով՝ «... գրաշար, խմբագիր
եւս կանոնադրաբար չեն վճարուիր. ես՝
ամենէն քիչ» (էջ 324):

Որպէս ՌԱԿ-ից ընտրված պատգամա-
վոր՝ օգոստոսին Նորից Փարիզ է մեկնում
եւ մասնակցում այդ կուսակցության 5-րդ
համաժողովին: Այստեղ մնում է երեք տարի
եւ որպէս կենվոր՝ բնակվում նախկին պոլ-
սեցի Նշան Չոխրապյանի բնակարանում:

Թեքեյանն այն խոր համոզումն ուներ,
որ սփյուռքահայությանը հայ պահելու

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՐ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահագն Թեֆեյանի ծննդյան 140-ամյակին

համար միակ միջոցը գրականություն ու-
նենալն է: Շ. Շահնուրին 1931 թ. հուլիսին
գրած նամակում նա նշում է. «Եկուր տես,
որ մեր մեծերը հայ նպարավաճառությունը
ազգապահպանման աւելի նպաստաւոր
կը համարեն՝ քան հայ գրականությունը, ո-
րուն համար կը խորհին արդէն, թէ պետ-
քին չափ կայ...» (էջ 328): Փարիզյան գրա-
կան կյանքը Նույնպիսի դժգոհանք է առա-
ջացնում Թեքեյանի մէջ, ինչպէս կահիրյա-
նը, որը նա բնորոշում է «ինքզինքէն վազ
անցած պառաւ մը», անդամամտելիորեն
«չոր ու փոս»: Նույնպիսի «չոր ու փոս» էր
նաեւ Թեքեյանի թոքերում: Հազը սաստիկ
էր դարձել ու ամենօրյա, վիրավոր աչքը
Նույնպէս մեծ անհասկացողություններ էր
պատճառում, այտուցված ձեռքերը՝ գրե-
լու դժվարություններ հարուցում: Թեքեյա-
նին առաջարկվում է Հելլոպոլիսի (Եգիպ-
տոս) Պերպերյան վարժարանի տեսչի
պաշտոնը, որը, սակայն, չի իրականաց-
վում: 1932-ին այն աստիճան է վատանում
նրա աչքի վիճակը, որ ամռանն ստիպված
է լինում պառկել հիվանդանոցում: Այս ըն-
թացքում Թեքեյանի «մէկ քանի» բանաս-
տեղծություններն հունարեն թարգմանու-
թյամբ լույս են տեսնում Գուլիս Ալեքիսի
կազմած «Հայկական մուսա» գրքում:

1933-ի գարնանը Փարիզում նախորդ
գրքից 14 տարի անց տպագրվում է Թեքե-
յանի «Մեր» ժողովածուն: Գրքի առաջին
գրախոսողներից մեկը Վահե Վահյանն էր
(*տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, 1933, սեպտեմ-
բեր*): Թեեւ Թեքեյանն այն միտքն է հայտ-
նել, որ գրախոսը «մինչեւ յատակը իջած
չէ», այնուամենայնիվ, գոհ է մնացել հոդ-
վածից եւ նրա հեղինակին գրել՝ «ո՛րչափ
բան խտացուցեր, ըսեր եւ լա՛ւ ըսեր էք...»

(էջ 357): Գրքի լույս ընծայումը որոշ ոգեւո-
րություն է հաղորդում բնաստեղծին, նրան
մղում անգամ կատակելու. «միտքս դրած
եմ մինչեւ ամառ անպատճառ հարստա-
նալ»: Բայց Փարիզի միակ հայկական
գրախանութը երկու շաբաթվա ընթաց-
քում ծախել էր գրքի... ընդամենը երկու օ-
րինակ: Մինչդեռ հեղինակն այն տպագրել
էր Բուզանդ Թոփալյանի տպարանում՝
պարտք մնալով նրան: Ակնկալվելիք գու-
մարն այդպէս էլ չի հավաքվում, որով Թե-
քեյանը մտադիր էր անտիպ բանաստեղ-
ծությունների մէկ հատորյակ եւ արձակ
գործերի մէկ ժողովածու հրատարակել:

Հեղինակի՝ թվով այս չորրորդ գիրքն
ընդգրկում էր կյանքի ու մահվան, հավի-
տենականի ու անցողիկի, ապրելու ու ե-
րազանքի, մարդկային ներաշխարհի ու
զգայնությունների դժվարալույծ բազում
ուլորտներ, միեւնույն ժամանակ արտա-
հայտում հեղինակի այն տվայտանքներն
ու ապրումները, որոնք նա ունեցել էր
հատկապէս վերջին մի քանի տարիներին:
Անչափ տարողունակ էր գրքին տրված
վերնագիրը՝ «Մեր»: Մեր առ մարդը, կյան-
քը, կինը ու մանավանդ՝ ազգը:

1933-ին Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցում
նեւգորեն սպանվում է Ամերիկայի հայոց թե-
մի առաջնորդ Դեռնոյ արք. Դուրյանը: Թեքե-
յանը շատ ծանր է տանում այդ մահը՝ մանա-
վանդ ազգային պառակտման տեսանկյու-
նից: Գրողը Նորից է ներքաշվում (հատկա-
պէս Շ. Նարդունու կողմից) միջկուսակցա-
կան պայքարների մէջ, գրում մի շարք սուր
հոդվածներ ու խմբագրականներ:

1933-ի հունիսին Փարիզում ստեղծվում
է հոբեյանական հանձնաժողով՝ նշելու
համար Թեքեյանի գրական գործունեու-

թյան 40-ամյակը, ինչպէս եւ մեծարելու
«հանրային գործչին»: Տպագրվում է գր-
քույկ՝ «Յոբեյան Վահան Թեքեյանի քա-
ռասնամեայ գրական գործունեութեան»
վերնագրով: Թեքեյանը դժկամությամբ է
ընդունում այդ նախաձեռնությունները:
Պատճառը ոչ միայն այն իրողությունն էր,
որ մի կողմից «վարձքը անյայտ, բեռը
յայտնի ու ծանր» էր, մյուս կողմից մտա-
վախությունը, որ «ոմանք բանաստեղծը
տօնելու արարքին մէջ» դնելու էին «հան-
րային գործիչը պարսաւելու դիտաւորու-
թիւնը», այլեւ գրողի բնավորության ծայ-
րագույն անհավակնոտությունը: 1934-ի
փետրվարի 10-ին Փարիզում, այնուամե-
նայնիվ, հանդիսությունը տեղի է ունե-
նում: Բանախոսությամբ հանդես են գա-
լիս Ա. Չոպանյանը, Լ. Բաշալյանը, Գ. Ֆե-
ներճյանը: Օրեր անց Թեքեյանին նվիր-
ված միջոցառում է կայանում նաեւ Մար-
սելում: Հ. Օշականին ուղղված մի նամա-
կում Թեքեյանն իր հոբեյանի առիթով
գրում է, որ ինքն այլեւս որեւէ բանից հա-
ճույք չի զգում, որի պատճառներից մեկն
էլ «գրած լեզուիս շուտով կորսուելուն,
պատմութեան անցնելուն համոզումը՝ որ
մոխիրի համ կը դնէ ամենաքաղցր վայել-
քին մէջ անգամ» (էջ 373): Թեքեյանից ան-
բաժան այդ զգացողությունն էլ ըստ ամե-
նայնի նրան 1942-ին մղել է գրելու «Լե-
զուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչէր
Կը կարդային զայն արդէն ու
պակսեցա՞ն անոնք ալ...
Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱՅՈՒ ԽԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Այլաբանական բնույթ ունեցող այս
քառյակները, որոնց թեման են արեւը,
լուսինը, աստղերը, ծիսիկը, գայլը եւ
վերջապէս մարդն ու նրա կենցաղը,
փորձում են բացահայտել բնության ու
տիեզերքի առեղծվածային երեւոյթու-
թեանը՝ դիտելով մարդուն իբրեւ բնու-
թյան հրաշք, որի համար կյանքը մի
հյուրանոց-բանդոկ է, ուր մտնելիս նա
մեծարում է, հեռանալիս՝ կողոպտում:

Կան հանելուկներ, որոնց մէջ
կյանքի ճանաչողության տարրն է ա-
կունքը եւ լուծման գաղտնիքը, այս-
պէս՝ «Չարմանք ասեմ քեզ սիրելի», -
հեղինակը բեւեռում է ուշադրությու-
նը կյանքի ոչ օրինաչափ ընթացքի
վրա, նախապատրաստում նրա լուծ-
ման փիլիսոփայական-այլաբանա-
կան ուղին:

Կին մի ծնաւ գրռուզ որդի,
Տղայն ունի ալիք ծերի,
Երբ ծերանայ՝ դառնայ սեւի:
(խաղող)

Չափազանց մեծ է Շնորհալու դերը
հայ քնարերգության պատմության
մէջ: Ինչպէս ասել է հայ միջնադարյան
գրականության խոշոր պատմաբան
Մանուկ Աբեղյանը, «Մեր բանաստեղ-
ծությունը 12-րդ դարի կեսին արդեն
երկնքից իջել էր երկիր եւ դարձել
կյանքի եւ բնության արտացոլումը ոչ
միայն իր ընդհանուր էութեամբ, այլեւ
բովանդակության մանրամասներով,
ինչպէս եւ բնական ու պարզ ձեւով,
շնորհալի քերթողի փափուկ, տրուսմա-
կան կամ լուրջ հույսով եւ անուշ, սր-
տաշարժ շէտերով», ինչպէս «Ողբ Ե-
դեսիոյ» պոեմում եւ մյուս երկերում:

Հանելուկներում եւս Շնորհալին դի-
մել է բազմազան արտահայտչամի-

ջոցների ու պատկերավորման հնա-
րանքների: Նա նախընտրել է հատկա-
պէս անձնավորման կամ դիմառնու-
թյան հնարանքը՝ շնչավորելով ու խո-
սեցնելով անշունչ առարկաներին:

Նա պատկերել է անցյալի եւ իր ժա-
մանակի հերոսների սխրագործու-
թյունները՝ ձգտելով վառ պահել ժո-
ղովրդի պատմական հիշողությունն ու
հերոսական ոգին:

Գրիգոր Նարեկացուց հետո Ներսէս
Շնորհալին գրավում է հայ բանաս-
տեղծության երկրորդ խոշոր բարձուն-
քը: Նրանից հետո, նրա ստեղծագոր-
ծության բարերար ազդեցությամբ,
հայ գրականության մէջ գնալով ավելի
են խորանում աշխարհիկ տրամադ-
րություններն ու ազգային-հայրենա-
սիրական ոգին:


Մեծ բանաստեղծի հանելուկների
կաղապարով ուրիշները հանելուկ էին
գրում նաեւ նրա մասին: Ահա դրան-
ցից մեկը.

Տեսես մի կայր խիստ պատուական,
Ճաշեր կազմէր յոյժ գանազան,
Մանկութիւնը ուտեն եւ զուարճանան
եւ գիտութեամբ փարթամանան:

Շնորհալին հայ գրականության այն
մեծերից է, որ իր վրա է վերցրել ժո-
ղովրդի լուսավորության, ուսուցման,
դաստիարակության գործը եւ բնու-
թյունից տրված իր շնորհներն ի
սպաս դրել սերունդների բարոյակրթ-
ման գործին: Բանաստեղծի ծննդից
անցել են դարեր, բայց նրա ժառան-
գությունն այսօր էլ շատ ուսանելի
արժեքներ ունի ոչ միայն հոգեւոր եւ
աշխարհիկ գրականության, այլեւ
մանկավարժության ու մանկագրու-
թյան ոլորտներում:

Սամվել ԵՐԿԱՉԱՐՅԱՆ

ՋԵՅՄՍ ՌԱՍՏԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ...



Սկիզբը՝ էջ 6

Այս բոլորը կարդալուց հետո շարքային ըն-
թերցողը կարող է բացականչել. «Ո՛ր՛վ է այս պրո-
ֆեսորը, որ պատմությունից ու գիտությունից
անտեղյակ՝ փորձում է վարկաբեկել մի ժողովու-
րդի, որի խնայած գումարներով երկար տարիներ
փառավորապէս ապրում են ինքը եւ իր հակա-
հայագիտական ամբիոնը Հարվարդի համալսա-
րանում»:

Հայոց ընտանեկան կողմնադրական կողմնադրական
թյունը միանգամայն հակառակ է գորոաստրիգ-
մի, ինչպէս եւ Սողոմ-Գոմորի բնակիչների ախ-
տաբորբը մոլութուններին:

Հեթանոս հայերի ընտանեկան կողմնադրական
թյանը ծանոթանալու համար խորհուրդ
կտայի արգո պրոֆեսորին կարդալ մ. թ. ա. V-IV
դարերում ապրած հույն գորավար եւ պատմա-
գիր Զսենոփոնի «Կյուրուպեդիա» պատմավեպը,
որի մէջ շատ ազգեր ու ցեղեր տեսած օտար

պատմագիրը մեծ հիացմունքով է պատկերում
երիտասարդ հայ ամուսնու պատվախնդրությու-
նը եւ մանկամարդ հայ կնոջ հավատարմությու-
նը՝ ցույց տալով, որ բարոյական վեհացնող գծե-
րը հայ ազգային բնավորության վաղնջական
հատկանիշներն են: Ուշագրավ է, որ սրա հետ
միասին արիստոկրատ հույն հեղինակը չի
թաքցնում հույն զինվորների միջեւ տեղ գտած
հետերային հարաբերությունները:

Եվ իզուր է արգո պրոֆեսորը փոքրասիական
Անահիտա աստվածուհուն վերագրում բարոյա-
կան խստություն: Այդ տպավորությունը նա զո-
րոաստրիգմի աստվածուհուն է վերագրել Հայոց
Ոսկեմայր եւ Ոսկեծին Անահիտ դիցուհու «մայր
զգաստուցեանց» բնորոշումից, որ նա ոչ միայն
կարդացել, այլեւ հայերեն ու անգլերեն մէջ է բե-
րել իր աշխատության 246-248 էջերում՝ Ագա-
թանգեղոսի Պատմությունից (պրգ. 53-54):

Անահիտի գլխավոր մեխյանը, որ հեթանոսա հա-
յերի ամենապաշտելի սրբավայրն էր, գտնվում
էր Մեծ Հայքի Եկեղյաց գավառի Երեզ ավանում
եւ հայտնի էր նաեւ դարերով նվիրագործված իր
բազում ոսկե սպասներով եւ թանկարժեք գան-
ձերով: Հայոց Անահիտ դիցուհու համբավն այն-
քան տարածված էր ժողովուրդների մէջ, որ մ. թ.
II դարի հռոմեացի պատմագիր Դիոն Կասսիոսը
Եկեղյաց գավառն Անահիտ դիցուհու անունով
անվանում է «Անահիտական գավառ»:

Որեւէ ուսումնասիրող, առաջին հերթին, այդ
հեթանոս հայկական դիցուհու մէջ պետք է տես-
ներ նրա կերպարն ստեղծող հեթանոս ժողովրդի
պատկերը: Եվ հիրավի, Անահիտ դիցուհին մե-
ծապէս պաշտված էր հայ ժողովրդի մէջ՝ որպէս
«կանացի զգաստության եւ ողջախոհության»
խորհրդանիշ, իսկ նրա տոնը նշում էին զարնա-
նը՝ Արեգ ամսի 30-ին, Նիսանի 15-ին, այն է՝ Հու-
լյան տոմարի ապրիլի 7-ին: Ուխտի էին գնում
նրա մեխյանը եւ պսակներով ու ծառերի թավ ու-
տերով զարդարում Անահիտի պատկերն ու բա-
գինը, ինչպէս վկայում է Ագաթանգեղոսի Պատ-
մությունը (պրգ. 49):

Շարունակելի
Ալբերտ ՄՈՐԵՆՀԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ԻԱԶԱՆՈՒՐ ԱԲՈՒՅԱՆ (1809-1848)

Սկզբը՝ թիվ 4-6

Հայրենասիրական թեման նույնպես նորովի է հնչում դորպատյան տարիների աբովյանական քնարերգության մեջ: Հայրենի եզերքի կարոտը, սիրելի մարդկանց հետ կապված հուշերը, հայրենիքի հանդեպ որդիական պարտքի զգացումը ստանում են գեղարվեստական հետաքրքիր մարմնավորումներ: Այս շրջանում նա եւս գրում է ներբողներ՝ նվիրված նշանավոր մարդկանց, ովքեր գնահատելի են հայրենիքին ու ժողովրդին մատուցած ծառայություններով եւ Հայաստանի հանդեպ սիրո աստիճանով: Այդպիսիք են Ֆ. Պարոտին, Յ. Ալամդարյանին, Վալտեր անունով մի դասախոսի նվիրված ձևերգերը:

Դորպատյան տարիներին ու մանավանդ 30-ական թթ. վերջերին Աբովյանի քնարերգության մեջ նկատվում են աշխարհաբարի տարրեր ներմուծելու փորձեր, որոնք հետագայում դառնում են նրա լեզվամտածողությունը եւ ոճը վերափոխող լուրջ գործոններ: Նա դուրս է գալիս գրաբարի սահմաններից եւ քաղաքացիություն տալիս ժողովրդական լայն խավերին հասկանալի աշխարհաբարին: Դա նշմարվում է հատկապես այն բանաստեղծություններում, որոնք գրված են «Վերջ Հայաստանի» վեպի թեմաներով:

Գրաբարից աշխարհաբարին անցման իմաստով Աբովյանի լեզվամտածողության մեջ մեծ հեղաշրջում կատարվեց 1840-41 թթ., երբ աշխարհաբարով իր ստեղծագործությունները հավաքեց մի գրքում, որ վերնագրել էր «Պարապ վախտի խաղալիք»: Նախապես այստեղ էին ընդգրկված նաեւ հայկական ժողովրդական խաղիկների եւ պարսկական քառյակների նմանությամբ գրված այն քառատող բանաստեղծությունները, որ կոչվում են բայաթիներ:

Աբովյանի բայաթիները: Բայաթին, որ սգերգ, ողբասացություն է (ժողովրդական բայաթի կանչելը), կարելի է ասել, ամենասերտ առնչություն ունի խաղիկների ու քառյակի հետ: Բանաստեղծական այս ժանրատեսակի անունը ծագել է պարսկական **բեյթ** բառից, որ նշանակում է երկտող բանաստեղծություն կամ բանաստեղծական տուն: Այստեղից էլ՝ **դուբեյթը, ռոբային** կամ **քառյակը:** Բեյթերով է կազմված դազալին կամ գազելը, որի կառուցվածքային յուրահատկություններից մեկն այն է, որ առաջին երկտող տունը տողակեսի կից հանգավորում ունի, մյուս տների առաջին տողն անհանգ է, երկրորդ տողերը հանգավորված են միմյանց եւ առաջին տան հետ, որը կոչվում է արքայական տուն (պարսկերենում՝ շահբեյթի): Երբեմն աշուղներն ու բանաստեղծները մեկ գեղարվեստական միավորի մեջ համադրել են տարբեր բանաստեղծական ձևեր, ինչպես Սայաթ-Նովան 58-րդ հայերեն խաղում գործածել է **մուխամմազ բայաթիով** հա-

մադրական կառույցը, որտեղ բայաթին ունի տողավերջի երեք կամ նույնիսկ չորս համանուն կամ հարանուն հանգակազմիչ բառ եւ ունի մտքի հարաբերական ինքնուրույնությամբ մեկ տան արժեք: Աբովյանական բայաթին բառախաղի վրա հիմնված քնարախոհական ավարտուն քառատող բանաստեղծություն է, *որտեղ առաջին եւ չորրորդ տողերն ունեն միեւնույն կամ մոտ հնչողություն* ունեցող տարբեր իմաստներով հանգակազմիչ բառ կամ բառակապակցություն, որոնք իրենց անակնկալ համադրությամբ հանելուկային հետաքրքրություն են հաղորդում բանաստեղծությանը: Մեջլիսում կամ հացի սեղանի շուրջ երգվելու համար ստեղծված աբովյանական բայաթիներն արժարժում են տարբեր թեմաներ՝ սկսած սիրո կարոտի ու տառապանքի, բարու եւ չարի, ուժեղի եւ թույլի մարդկային հարաբերություններից, անձնական տարբեր հոգեվիճակների բացահայտումից մինչեւ պատմաքաղաքական իրողությունների արծարծումներ: Աբովյանական բայաթիները, սակայն, ինքնուրույն եւ անկախ լինելով, քառյակների նման արտահայտում են ավարտուն խոհ կամ տրամադրություն, մարդկային զգացմունքների տարբեր դրսևորումներ:

Քառյակ-բայաթիների անհրաժեշտ ու պարտադիր բաղադրատարրերից մեկը բառախաղն է, որ ստեղծվում է համահունչ տարիմաստ կամ իմաստային նրբերանգով տարբեր բառերի կամ բառակապակցությունների նպատակային գործածությամբ: Ծիածանը ժողովրդական լեզվով կոչվել է նաեւ երկնքի **կանաչ կարմիր**, որը կարող էր համադրվել գարնանային սար ու ձորի իրական **կանաչ** խոտերի եւ **կարմիր** ծաղիկների հետ: Դեռ առաջին բայաթիում տեսնում ենք այդ զուգադրությունը.

*Երկնքի կանաչ կարմիր,
Այ սիրուն կանաչ կարմիր,
Լերդս ու թոքս չորացել են,
Սար ու ձոր կանաչ կարմիր:*

Հնում գրել չիմացողները պարտամուրհակների կամ պաշտոնական այլ փաստաթղթերի տակ «ստորագրում» էին իրենց թանքոտած բուրձ մատի հետքը դրոշմելով, որ կոչվում էր ձեռք քաշել: **Ձեռք քաշիր** բայական հարադրությունը գործածվում է երկու հիմնական իմաստներով՝ հրաժարվիր կամ հեռացիր, եւ մյուսը՝ ստորագրիր: Սիրային հետեւյալ բանաստեղծության մեջ, օրինակ, այդ նույն հնչողությամբ հարանուններն իրոք առաջին եւ չորրորդ տներում գործածված են տարբեր իմաստներով եւ պատկերում են սիրածի վարմունքից դժգոհ եւ սիրուց հուսահատված բանաստեղծի ծանր հոգեվիճակը.

*Ինձանից դու ձեռք քաշիր,
Կուգես՝ հոգիս ա՛ռ, քաշիր,*



Մահիս գիրը գրվել ա՝
Դու էլ արի ձեռք քաշիր:

Կյանքի զանազան կողմեր պատկերող, կենսական տարբեր հիմնախնդիրների վերաբերող ութսուն բայաթի-քառյակներն իրենց արծարծումներով իրոք բազմազան են: **Ուրուր** գիշատիչ թռչունը եւ **ո՛ւր** հարցահարաբերական դերանվան կրկնությունն են զուգադրված հետեւյալ բանաստեղծության մեջ.

*Տար էդ հավքին, այ ուրուր,
Աշխարիս դանակ ա ու սուր,
Չոռ մարթի թուրն ա կտրում,
Խեղճն ո՛ւր փախչի, ախ ո՛ւր, ո՛ւր:*

Համար կապը եւ **համար** գոյականը իրենց տարբեր նշանակություններով գործածվել են հետեւյալ բայաթիում.

*Մեկ սիրտ ունեմ քեզ համար,
Միշտ մեռած, միշտ ցավազար,
Դու էլ որ դեղ չես անում՝
Ո՛ւմ տամ ցավիս թիվը, համար:*

Բայաթիներում հմտորեն է կիրառված պատկերավորման-արտահայտչական միջոցներից մեկը՝ զուգադրությունը, որով համադրվում են բնապատկերն ու մարդկային ապրումները: Այդ համադրությունն ավելի տպավորիչ է դարձնում գեղարվեստական պատկերը: Ծառի պտուղը միրգ է նշանակում ընդհանուր առմամբ, որ ենթակա է կարկտահարության: Բայց մեր նախնիները, ելնելով արտաքին նմանությունից, փոխաբերաբար նաեւ մարդու տեսողության օրգանը՝ աչքն են պտուղ կոչել: Վկա՝ ժողովրդական «Հիմա կտամ՝ պտուղդ կթափեմ», «Պտուղը թափվել է, խեղճ մարդը՝ բուրդովին կուրացել» արտահայտությունները: Տարբեր բառերի կառուցվածքային նույնության եւ իմաստային զանազան նշանակությունների հաշվառումով Աբովյանն ստեղծել է հետեւյալ բայաթին, որը մի կողմից ներկայացնում է բնական աղետի՝ կարկտահարության հետեւանքները, մյուս կողմից՝ հոգեբանական աղետի ենթարկված մարդու խռովահույզ վիճակը.

*Կարկուտն դիպավ մեր պտղին,
Մեր հանդին ու ծաղկերներին,
Ախ՝ քո դարդն եմ միշտ քաշում,
Նրանք՝ լիս չեն տա իմ պտղին:*

Հնարավոր է այս պատկերն ըմբռնել նաեւ իբրեւ այլաբանություն եւ կարկուտը պատկերացնել ավարառու թշնամու հարձակման եւ հայրենի երկրի ավերման ու կողոպտման իմաստով: Այսպես մտածելու հիմքեր կան, որովհետեւ իր ողջ ստեղծագործության մեջ Աբովյանն անդրադարձել է այս խնդրին՝ միջնադարյան ողբերի օրինակով գրելով նաեւ ավերված հայրենիքի եւ օտար կեղեքիչների լծի տակ տառապող հայության ողբերգական վիճակը պատկերող զգայացունց բանաստեղծություններ: Պատմաքաղաքական ողբի յուրօրինակ դրսևորում է Բագրատունյաց մայրաքաղաք Անիին վերաբերող բանաստեղծական մանրաքանդակը: Աբովյանի գլխավոր մտահոգությունը հայոց անցյալի փառքերի վերարծարծումն էր, մեծ կորուստների սգի համազգայնացումը եւ հայրենի ավերակները վերականգնելու համազգային բաղձանքը: Հուզական մեծ լիցքեր է պարունակում վիմագիր արձանագրություններից մեկի «բանդողիդ տունը քանդվի» արտահայտության հիմնադրույթով եւ **Անի** մայրաքաղաքի անվան ու **անել** բայի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի **անի** բայաձեւի համանունությամբ կազմվածը.

*Անի, Անի , ա՛խ, Անի,
Քանդողիդ տունը քանդվի,
Քեզ որ ազգը չպահեց՝
Մեկ սուզ անողն ի՛նչ անի:*

«Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանում բայաթիների ստեղծման նպատակը Խ. Աբովյանը պարզորոշ բացատրել է. «Բայաթիքը են մտքով եմ գրել, որ չունքի մեջլուսով, հացի վրա թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ-քիչ լեզուն քաղցրանա, չունքի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը: Հույս ունիմ, որ ուրիշ մարդիք դիւ լավը չինեն» (Խ. Աբովյան, *Երկեր*, Հայ դասականների գրադարան, եր., 1984, էջ 191-192): Բերվածից երևում է, որ դրանք նաեւ երգվել են որոշակի եղանակներով, որոնց մասին չենք կարող դատողություններ անել: Սակայն կարող ենք ասել, որ բայաթիները փոքր ձեւի մեջ մտքի ու զգացմունքի խոհաքնարական խտացումներ են, ինչպես մեր մանրանկարչությունն ու խաչքարարվեստը:

Պարսկական քառյակագրության ավանդների, միջնադարյան ժողովրդական խաղիկների, հայրենիների հիման վրա Հովհ. Թումանյանը, Ե. Չարենցը, Հովհ. Շիրազը ստեղծեցին քառյակների իրենց ինքնատիպ աշխարհները՝ ընդարձակելով ժանրաձեւի թեմատիկ-բովանդակային սահմանները, հասնելով փիլիսոփայական խորության ու արվեստի կատարելության:

*Շարունակելի
Սամվել ՄՈՐՈՎՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



Այվազովսկին իր կյանքի տարբեր շրջաններում, որպես մայր երկրի խորհրդանշան, պատկերել է Արարատը: Այժմ աշխարհի տարբեր երկրներում եւ մեզանում հայտնի է նրա՝ Արարատը պատկերող 9 գեղանկար: Վերջերս ծանոթներիցս մեկը՝ Անդրեաս Ռուբյանը, ԱՄՆ-ում տեսել էր Այվազովսկու՝ մեզ դեռեւս անծանոթ, կարմրաթույր լուծումներով Արարատի մի փոքրաչափս (53x46) պատկեր, որի միայն լուսանկարն առայժմ հաջողվեց մեզ ձեռք բերել: Վեհաշուք լեռան ստորոտում հոսում

ԱՆՇԱՆՈՒԹ «ԱՐԱՐԱՏԸ»

է գետը, որի ձախակողմյան եզրափով՝ թե՛ միջին եւ թե՛ առջեւի պլաններում, ձիավորների խմբեր են՝ առաջինը՝ ընթացքի մեջ, երկրորդը՝ դադար է առել՝ որոշակի գրույցի եւ կամ մոտիկից Արարատը դիտելու համար:

Արարատներից մեկում էլ Այվազովսկին մտահղացել է ներկայացնել 301 թվականին լեռան առջեւ հավաքված հայ ժողովրդին՝ կենտրոնում հավատի անխոչ ջատագով Գրիգոր Լուսավորչը, ում օգնույթեց հայ ժողովուրդն առաջինն ընդունեց քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Ստեղծելով այդ հրաշալի նկարը՝ Այվազովսկին ցուցադրեց իր ծննդավայրում՝ Թեոդոսիայի կենտրոնական եկեղեցում: Ի դեպ՝ հրաշալի ու լուսավառ է պատկերել նաեւ Սեւան լճի եկեղեցին: Հայկական թեմաներով ստեղծված նրա 75 նկարները, որոնցից չորսը պահպանվում են Հա-

յաստանում, տեղ եւ գտել Այվազովսկուն նվիրված իմ նոր գրքում:

1989-ին Այվազովսկին ստեղծել է նաեւ «Նոյը իջնում է Արարատից» մեծադիր նկարը, որը ցուցադրել է Փարիզում եւ սիրով նվիրել է Նոր Նախիջեւանի հայկական դպրոցին: 1921-ին Մարտիրոս Սարյանը նկարը կարողացել է երեւան բերել եւ հանձնել պատկերասրահին: Հայկական թեմաներով մնացյալ երեք նշանավոր նկարները՝ «Բայրոնի այցը Ս. Ղազար կղզի» (1899), «Մխիթարյան հայրերը. հայկական բառարանը» (1843) եւ «Լուսնյակ գիշեր. Սեւան» (1858), տողերիս հեղինակին է հաջողվել բերել եւ հանձնել Հայաստանի ազգային պատկերասրահին:

Արժե հիշել, որ դեռեւս 28 տարեկան Այվազովսկին, ով Եվրոպայում եւ Ռուսաստանում մեծ համբավի ու գնահատանքի էր արժանացել որպես տաղանդավոր ծովանկարիչ, 1845 թվականին Կաթողիկոս

Ն. Աշատրակեցուն նամակ է գրել՝ վստահեցնելով. «Իմ պատրաստակամությունն է ծառայել հարազատ մայր ժողովրդին եւ նրա մշակույթին»:

Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտոնյայի Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 16.04.2018թ.

Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ